# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2016 թվականի օգոստոսի 1-5-ը կազմակերպում է Համահայկական կրթական 7-րդ խորհրդաժողովը:

Խորհրդաժողովում քննարկվելու են Սփյուռքի կրթական ոլորտում առկա հիմնախնդիրները, իրագործվող ծրագրերի բարելավման ուղիները և Սփյուռքում ազգային կրթադաստիարակչական գործին աջակցությանն ուղղված հետագա համատեղ քայլերը:

Խորհրդաժողովի օրակարգի վերաբերյալ ակնկալում ենք ստանալ Սփյուռքի կրթության և դաստիարակության ոլորտում գործող մարմինների, կազմակերպությունների և անձանց առաջարկությունները մինչև ս.թ. մայիսի 1-ը: Առաջարկությունների հիման վրա մշակված աշխատանքային ծրագիրը/օրակարգը կներկայացվի մինչև հունիսի 1-ը:

Կարևոր է նաև նշել թեմատիկ նիստերի ժամանակ որպես զեկուցող հանդես գալու պատրաստակամությունը և զեկույցի թեման: Լիագումար նիստերում ելույթի տևողությունը չպետք է գերազանցի 15 րոպե, իսկ մասնախմբերում՝ 10 րոպե:

Խորհրդաժողովը գումարվում է բաց հրավերի ձևով և նրան կարող են մասնակցել հայ համայնքներում ազգային կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղվող մարմինների, կազմակերպությունների, հաստատությունների մեկական ներկայացուցիչներ: Թեմական և Ուսումնական խորհուրդները, կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղվող համահայկական և համայնքային կազմակերպությունները, հաստատությունները, ըստ նպատակահարմարության, կարող են հանդես գալ թվով երկուսից ավելի ներկայացուցիչներով: Մասնակցելու համար պետք է լրացնել կից ներկայացվող հայտը և այն փոխանցել ՀՀ կրթության և գիտության նախարարություն մինչև 2016թ. հուլիսի 1-ը:

Մասնակցության և ելույթների հարցում նախապատվությունը տրվում է արտերկրի հայ համայնքներում գործող Թեմական և Ուսումնական խորհուրդների, կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղվող համահայկական և համայնքային կազմակերպությունների, հաստատությունների ներկայացուցիչների: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը մեծ նշանակություն է տալիս օրակարգային հարցերի վերաբերյալ պատվիրակությունների նախնական քննարկումների արդյունքների բանաձևմանն ու ներկայացմանը Խորհրդաժողովում՝ համապատասխան մասնախմբում զեկույցի տեսքով:

Խորհրդաժողովում կարող են ՀՀ կրթության և գիտության նախարարության և տվյալ երկրի կամ տարածաշրջանի ներկայացուցիչների միջև քննարկման նյութ դառնալ նաև աշխատանքային ծրագրում չընդգրկված և տարածաշրջանային կամ երկկողմանի

հետաքրքրություն ունեցող հարցեր, որոնց լուծումը կարող է դրականորեն ազդել տվյալ երկրում կամ տարածաշրջանում ազգային կրթության և դաստիարակության գործի կազմակերպման վրա:

Խորհրդաժողովի ընթացքում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ստանձնում է մասնակիցների կեցության և սննդի ծախսերը (խորհրդաժողովի սկիզբն ու ավարտը համարվում են ծրագրով նախատեսված առաջին և վերջին միջոցառումները): Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները:

Պարզաբանումների, հավելյալ տեղեկություններ, ինչպես նաև առաջարկություններ և ելույթները ներկայացնելու համար դիմել ՀՀ կրթության և գիտության նախարարություն.


Հասցե. 0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարության տուն 2,
ՀՀ կրթության և գիտության նախարարություն, սենյակ 336
Հեռ.՝ 374 10 58-13-91
ֆաքս՝ 374 10 52-73-43
Էլ. փոստ՝ spyurq@yahoo.com կամ info@edu.am
Կայքէջ՝ www.edu.am